ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի Պիոներների փողոց թիվ 1 հասցեում «Արմստրոյ» ՍՊԸ կողմից նախատեսվող Գագարինի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության վերաբերյալ դիտողությունների, առաջարկությունների և պարզաբանումների

| *N* | *Դիտողություն, առաջարկություն* | *Պարզաբանում* |
|---|---|---|
| | *ՇՄՆ (Շրջակա միջավայրի նախարարություն)* | |
| 1 | «3.1. ՀՀ ազգային օրենսդրությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն» բաժնում ներառել.<br>- ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշումը,<br>- ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշումը: | Նշված որոշումները ավելացվել են Հաշվետվության համապատասխան բաժնում (էջ 8): |
| 2 | «5.5. Մթնոլորտային օդ» ենթաբաժնում մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելիս օգտվել «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից, որը հրապարակված է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում (http://meteomonitoring.am/page/1591) | Հաշվետվության նշված բաժինը խմբագրվել է, պահանջվող տեղեկատվությունը ներկայացվել է (էջեր 32-33): |
| 3 | «9.1. Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները» բաժնում և «Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան. մեղմացնող միջոցառումներ» աղյուսակում մթնոլորտային օդի աղտոտվածության նվազեցմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումները համապատասխանեցնել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի, 2-րդ մասի դրույթներին | Նշված ենթաբաժինը և ԲԿՊ-ն խմբագրվել են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի, 2-րդ կետի դրույթներին համապատասխան: Վերոնշյալ օրենքը ավելացվել է հաշվետվության համապատասխան բաժնում (էջեր 8, 66-68, 79-80): |
| 4 | Ներառել նկարագիր ջեռուցման և օդափոխության համակարգերի վերաբերյալ | Հայցվող տեղեկատվությունը ավելացվել է Հաշվետվության համապատասխան բաժնում (էջեր 54-57): |
| 5 | Ներառել տեղեկատվությոն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով | Սույն գործունեության շրջանակներում մթնոլորտի վրա տնտեսական |

| N | Դիտողություն, առաջարկություն | Պարզաբանում |
|---|---|---|
| | առաջացած ազդեցության գնահատման վերաբերյալ | գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման իրականացման պահանջ չկա համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ Օրենքի («Բ» կատեգորիայի գործունեություններին վերաբերվող դրույթներ): |
| 6 | Ներառել փոշենստեցման, այդ թվում՝ փոշեճնշիչ սարքավորումների կիրառումը համաձայն՝ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «շինարարական արտադրության կազմակերպում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն ու Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N07-ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N02-Ն հրամանի | Հաշվետվության համապտասխան բաժինները խմբագրվել են: Հայցվող տեղեկատվությունը ավելացվել է (էջեր 9, 68): |
| 7 | Առաջնորդվել շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի հոկտեմբերի 29-ի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցները հաստատելու մասին» N438-Ն հրամանի հավելված 2-ով սահմանված ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներով | ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել և լրամշակվել է նշված հրամանի պահանջներին համապտասխան: Հրամանը ավելացվել է հաշվետվության համապատասխան բաժնում (էջ 9): |
| 8 | Հաշվետվությունում նշվում է, որ շինարարության փուլում ջրցանման համար ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռններով, անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ կազմակերպության հետ է կնքվելու պայմանագիրը՝ համապատասխան | Ինչպես նշված է հաշվետվությունում՝ ջրամատակարարումը կկազմակերպվի միայն համապտասխան լիցենզավորված ընկերության հետ Պայմանագիր կնքելուց հետո (էջեր 80-81): Պայմանագրի կնքումը իրականացվելու է Կապալառուի կողմից շին. աշխատանքներից առաջ և |

| N | Դիտողություն, առաջարկություն | Պարզաբանում |
|---|---|---|
| 9 | ջրօգտագործման թույլտվության առկայությունը ստուգելու համար, | հանդիսանում է շին. աշխատանքների փուլի կարգավորման առարկա: |
| 9 | Անհրաժեշտ է հաշվետվությունում ներառել կանաչապատ տարածքների ոռոգման ձևը, եղանակը, ոռոգման համար նախատեսված ջրի բերման աղբյուրը՝ համապատասխան ջրօգտագործման թույլտվության առկայությունը ստուգելու համար, | Ոռոգման իրականացման նպատակով՝ համապատասխան ՋՕԸ-ի հետ կկնքվի պայմանագիր և ոռոգման ջուրը տարածք կմատակարարվի ավտոցիստեռնով: Պայմանագրի կնքումը չի հանդիսանում սույն ՇՄԱԳ հաշվետվության առարկա: |
| 10 | Հաշվետվությունում նշված է, որ շահագործման փուլում հասանելի կլինի աշխատող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ, անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ համակարգի մասին է խոսքը՝ համապատասխան ջրօգտագործման թույլտվության առկայությունը ստուգելու համար | Ինչպես ներկայացված է Հաշվետվությունում՝ տարածքում առկա է գործող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ (քանի որ խոսքը վերաբերվում է տարիների ընթացքում գործող միջնակարգ դպրոցի տարածքին): Շահագործման փուլում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ տնօրինումը իրականացվելու է «Հայաստանի Հանրապետության Գեղագրքունիքի մարզի Գագարինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից: |
| 11 | Հաշվետվության «3.2. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային բնապահպանական կոնվենցիաներին» բաժնի աղյուսակ 1-ի 8-րդ և 14- րդ կետերը՝ ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիան (Հելսինկի, 1992թ.) կրկնվում են | Վրիպակը ուղղվել է (էջ 14): |
| 12 | Հստակեցման կարիք ունի, ի՞նչու է ոչ պիտանի հողային հանույթը Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված համապատասխան աղբավայր տեղափոխվում | Վրիպակը ուղղվել է, բաժինը խմբագրվել է (էջ 63): |
| 13 | «9.1.3. Թափոնների կառավարում» բաժնում անհրաժեշտ է ներկայացնել գործունեության ընթացքում առաջացած թափոնատեսակների քանակների վերաբերյալ տեղեկատվությունը | Հայցվող տեղեկատվությունը ավելացվել է (էջ 69): |
| 14 | Նշել քանդման ենթակա շինության եղանակը, առաջացող թափոնատեսակները, ծավալը, ազդեցությունները, նախատեսվող միջոցառումները | Հայցվող տեղեկատվությունը ավելացվել է (էջ 50): Թափոնատեսակները ներկայացված են Հաշվետվության 9.1.3 ենթաբաժնում: |

| N | Դիտողություն, առաջարկություն | Պարզաբանում |
|---|---|---|
| | | Նախատեսվող միջացառումները ներկայացված են ԲԿՊ-ում: |
| 15 | «5.7 Ջրային ռեսուրսներ» ենթաբաժնում բացակայում է հայցվող տարածքի ջրային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը | Հայցվող տեղեկատվությունը ներառվել է Հաշվետվության համապատասխան բաժնում (էջեր 36-37): |
| 16 | Իրադրության սխեմա ներկայացնել (ՇՄԱԳ հաշվետվության մեջ նաև տեքստային), որը կներառի հեռավորությունները հարևանությամբ գտնվող ենթակառուցվածքներից, ներառյալ ճանապարհ/ներից, հողմասերից, բնակելի տներից, հասարակական շենք-շինություններից, էլ. ենթակայանից և այլն, նշել նաև դիտարկվող և հարակից տարածքով անցնող ջրամատակարարման և գազամատակարարման խողովակների ուղեգիծը, նախատեսել նաև ենթակառուցվածքների վրա հնարավոր ազդեցությունները կանխարգելող /մեղմող միջոցառումներ՝ բացառելով որևէ շինարարական աշխատանքներ պահպանման գոտում և ներառել բնապահպանական կառավարման պլանում | Հայցվող տեղեկատվությունը ներառվել է Հաշվետվության համապատասխան բաժիններում (էջեր 18, 20, 81-82): |
| 17 | Նախատեսվող գործունեության համար դիտարկվող տարածքի նկարագիրը ներկայացվել է թերի, կան անհամապատասխանություններ նաև կառուցապատված և չկառուցապատված լինելու վերաբերյալ, անհրաժեշտ է հստակեցում և ամբողջական նկարագիր | Հաշվետվության բոլոր բաժինները համապատասխանաբար խմբագրվել են, հաշվի առնելով բոլոր դիտողությունները և առաջարկությունները: |
| 18 | Ներկայացնել տարածքում առկա ծառաթփային բուսականության տեսակային և քանակային կազմը, 40-50 ծառերի հատման հիմնավորումը, կանաչ գոտու հնարավոր խախտումները, պահպանման միջոցառումները, դիտարկվող և հարակից տարածքում առկա և հատման (անհրաժեշտության դեպքում) ենթակա ծառերի տեսակային և քանակային կազմը: Նախատեսել կանաչ տարածքների և | Հավշվետվության 9.1.14 ենթաբաժինը համապատասխանաբար խմբագրվել է (էջեր 75-76): |

| N | Դիտողություն, առաջարկություն | Պարզաբանում |
|---|---|---|
| | գոյություն ունեցող ծառերի պահպանությանն ուղղված միջոցառումներ | |
| 19 | ՇՄԱԳ հաշվետվությունում տեքստային տարբերակով ներկայացնել նախատեսվող գործունեության նկարագիրը, ինչպես նաև կառուցապատման հիմնական տեխնիկա տնտեսական ցուցանիշները (հողամասի ընդհանոր մակերես, կառուցապատման մակերես, կանաչապատման մակերես, անջրանցիկ մակերես, շինարարական ծավալ, օժանդակ կառույցներ (կաթսայատուն, ավտոկայանատեղի՝ մակերես, մեքենաների քանակ և այլն), ստորգետնյա հարկի նիշը, մակերեսը | Հայցվող տեղեկատվությունը ավելացվել է Հաշվետվության համապատասխան բաժնում (էջեր 49-57): |
| 20 | Կանաչապատման ցուցանիշները՝ համապատասխան կանաչապատման նախագծի սխեմայի՝ կանաչապատման ենթակա տարածքի մակերեսներով, նոր տնկվող ծառերի որակական և քանակական կազմով ներկայացնել նաև տեքստային | Հայցվող տեղեկատվությունը ավելացվել է Հաշվետվության համապատասխան բաժնում (էջեր 75-76): |
| 21 | Անհրաժեշտ է հողային աշխատանքներ բաժնում ներկայացված տվյալների հստակեցում և տարաբաժանում. Նշված ցուցանիշներից պարզ չէ, հողի բերրի շերտի առկայությունը կամ բացակայությունը, անհրաժեշտ է հստակեցնել նախատեսվող գործունեության ընթացքում հանվող, տեղափոխվող և օգտագործման ենթակա հողագրունտի և հողի բերրի շերտի ծավալները, անհրաժեշտ բռաահողի ձեռքբերման եղանակը, ծավալը | Հայցվող տեղեկատվությունը ավելացվել է Հաշվետվության համապատասխան բաժնում (էջ 69): |
| 22 | Անհրաժեշտ է հստակեցնել շինհրապարակի սահմանները և ընդհանուր մակերես | Հայցվող տեղեկատվությունը ավելացվել է Հաշվետվության համապատասխան բաժնում (էջ 49): |
| 23 | Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներ նախատեսել | Ներկայացված նախագիծը մշակվել է, հաշվի առնելով՝ բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորությունների և անվտանգության ապահովումը: |

| N | Դիտողություն, առաջարկություն | Պարզաբանում |
|---|---|---|
| | | Նախատեսվել են համապատասխան միջոցառումներ, որոնք ներկայացված են աշխատանքային նախագծում: |
| 24 | ՇՄԱԳ հաշվետվությունում բացակայում է կաթսայատան նկարագիրը /տեղադիրք, մակերես, հզորություն, տիպ և այլն/, կաթսայատան պահպանման / վերակառուցման /քանդման աշխատանքները և դրանց արդյուքնում ազդեցությունները, կանխարգելող / մեղմացնող միջոցառումները | Հայցվող տեղեկատվությունը ավելացվել է Հաշվետվության համապատասխան բաժնում (էջեր 54-57): |
| 25 | Գլխավոր հատակագծով ներկայացվել է հենապատերի կառուցում. Հաշվետվությունում բացակայում է հենապատերի կառուցման անհրաժեշտության, իրականացման աշխատանքները, ազդեցությունները | Հայցվող տեղեկատվությունը ավելացվել է Հաշվետվության համապատասխան բաժնում (էջ 54): |
| 26 | Ներկայացնել շինարարության փուլում տեղադրվող բիոզուգարանների քանակը՝ աշխատողների քանակին համապատասխան, սպասարկման եղանակը | Հաշվետվությունը խմբագրվել է: Բիոզուգարանների տեղադրման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ տարածքը գտնվում է գործող դպրոցի տարածքում (Գազարին բնակավայրի սահմաններում), որտեղ առկա են գործող ենթակառուցվածքներ: Բիոզուգարանների մասին տեղեկատվությունը ուղղվել է: |
| 27 | Ներկայացնել ժամանակացույց, տևողությունը հստակեցնել | Հայցվող տեղեկատվությունը ավելացվել է Հաշվետվության համապատասխան բաժնում (էջ 58): |
| 28 | Հաշվետվությունում բացակայում է նախատեսվող գործունեության տարածքի Ինժեներաերկրաբանական հետազոտությունների եզրկացությունը | Ինժեներաերկրաբանական հետազոտությունների մասին տեղեկատվությունը ներկայացվում է սույն ամփոփաթերթի հիմնա վրա լրամշակված ՇՄԱԳ հաշվետվությանը կից: |
| 29 | Էլեկտրամատակարարման ջրամատակարարման, գազամատակարարման տեխպայմանները ներառել Հաշվետվությունում | Տեխ. պայմանների համար դիմումները ներկայացվել են համապատասխան մարմիններին: Անհրաժեշտության դեպքում կարող են ներկայացվել համապատասխան դիմումները: |
| 30 | Վարչական (կազմակերպական) շրջանակը բաժինում տեղ գտած ավելորդ տեղեկատվությունն անհրաժեշտ է խմբագրել, | ՇՄԱԳ հաշվետվությունը ամբողջությամբ խմբագրվել է հաշվի առնելով սույն ամփոփաթերթում նշված |

| N | Դիտողություն, առաջարկություն | Պարզաբանում |
| --- | --- | --- |
| | ինչպես նաև խմբագրել ՇՄԱԳ-ում առկա անճշտությունները: | դիտողությունները և առաջարկությունները, բոլոր անճշտությունները շտկվել են: |
| *Առողջապահության նախարարություն* | | |
| 1 | Հնարավոր չէ տրամադրել կարծիք, քանի որ կարծիք տրամադրելու համար անհրաժեշտ է Հաշվետվության մեջ ներառել ազդեցությունների հետ կապված առողջապահական գործոնների վերլուծությունը, մասնավորապես՝ իրականացվող աշխատանքների ընթացքում աշխատատեղում և բնակավայրում առաջացող աղմուկի (հաշվարկներ) և թրթռման մակարդակների վերաբերյալ տվյալներ: | Իրականացվող շին. աշխատանքների ընթացքում աղմուկի և թրթռման մշտապես կայուն աղբյուրներ չկան, ինչպես նաև հաշվի առնելով նախատեսվող գործունեության համեմատաբար փոքրածավալ աշխատանքները, որևէ աղմուկի տարածման հաշվարկ իրականացնելու անհրաժեշտությունը բացակայում է: |
| 2 | Միաժամանակ, առաջարկում եմ Հաշվետվությունում բերված անվանումները համապատասխանեցնել գործող օրենսդրությանը, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրած է ճանաչվել, իսկ ՀՀ-ում վերահսկողական գործառույթները վերապահված են համապատասխան տեսչական մարմիններին: | Հաշվետվությունը համապատասխանաբար խմբագրվել է (էջեր 9, 11): |
| *Կադաստրի կոմիտե* | | |
| 1 | «Արմստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հաշվետվության 49-րդ էջում նշված շինության կոորդինատները գործող կադաստրային քարտեզում արտացոլելիս այն գտնվում է քննարկվող հողամասի (կադաստրային ծածկագիր՝ 05-004-0309-0002) սահմաններից դուրս: | Հաշվետվությունում թարմացվել են բոլոր հատակածերը, ինչպես նաև ներկայացվել է հատված Կադաստրային քարտեզից, որը հաստատում է տեղամասի սահմանները (էջեր 22-24, 57): |
| 2 | Միաժամանակ տեղեկացնում ենք, որ առկա է անհամապատասխանություն իրավունքների պետական գրանցում ստացած հողամասի (մակերեսը՝ 1.15 հա) և կադաստրային քարտեզում (մակերեսը՝ 2.073041 հա) արտացոլված հողամասի մակերեսների, գծային չափերի և երկրաչափական տեսքի միջև: | Գլխավոր հատակագծում նշված է հողամասի եզրագիծը ըստ սեփականության վկայականի, (ներկայումս փաստացի ցանկապատված) որը հետագայում նախատեսվում է կիրառել և ընդունել հիմք 04.03.2025թ. կադաստրային տեղեկատվությանբ եկած տվյալների համաձայն հողամասի չափերի և |

| N | Դիտողություն, առաջարկություն | Պարզաբանում |
|---|---|---|
| | | սահմանագծի ճշգրտման համար: Նշված սահմանում է ավելացվել է Հաշվետվության համապատասխան բաժնում (էջեր 51-52): |
| **Գեղարքունիքի մարզպետարան** | | |
| 1 | Վերոնշյալ հաշվետվության վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք՝ կառուցապատումը ՀՀՇՆ 30-01-2023 «քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերին և ՀՀ-ում գործող բնապահպանական և քաղաքաշինական նորմերին համապատասխան իրականացնելու պայմանով | ՇՄԱԳ հաշվետվությունը և աշխատանքային նախագիծը պատրաստված են՝ հաշվի առնելով նշված նորմերի պահանջները: |
| **Քաղաքաշինության կոմիտե** | | |
| 1 | ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) առարկություններ չունի՝ կառուցապատման հետագա գործառույթները ՀՀ օրենսդրության, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան իրականացնելու պայմանով: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ քաղաքաշինական հարցերի շուրջ Կոմիտեն իր կարծիքը կհայտնի նախագիծը պետական համալիր փորձաքննության ներկայացնելու ժամանակ: | ՇՄԱԳ հաշվետվությունը և աշխատանքային նախագիծը պատրաստված են՝ ՀՀ օրենսդրության, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: |
| **Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն** | | |
| 1 | Տեղեկացնում ենք, որ պատմության և մշակույթի հուշարձաններ, ինչպես նաև հնագիտական օբյեկտների արտաքին նշաններ և հետքեր տարածքում չկան, ուստի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը առարկություններ և դիտողություններ չունի: Միաժամանակ հայտնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի № 438 որոշման 43-րդ կետի՝ հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և | Նշված որոշումը ավելացվել է Հաշվետվության համապատասխան բաժնում (էջ 9): Հաշվետվության մեջ ներառված է «Պատահական գտածո» գործընթացը, որը ըստ անհրաժեշտության պետք է իրականացվի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: |

| *N* | *Դիտողություն, առաջարկություն* | *Պարզաբանում* |
|---|---|---|
| | այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին: | |